պայմաններում Դատարանը եզրահանգում է, որ սույն գործով որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է համարել 100,000.00 ՀՀ դրամը, հետևաբար՝ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերության՝ թիվ ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0103-11 ծածկագրով պայմանագրի 26.08.2024թ. միակողմանի լուծումը և դրա հիման վրա «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել 2024թ. փետրվարի 27-ին կնքված թիվ «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0103-11» ծածկագրով մատակարարման պայմանագրի «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերության կողմից 2024թ. օգոստոսի 26-ի միակողմանի լուծումը:

Անվավեր ճանաչել «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերության 2024թ. սեպտեմբերի 3-ի թիվ N ՀԲԿԳՀԱՊՁԲ-24/0201-17, N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0103-17, N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0104-18 որոշումը:

«Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության բռնագանձել 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

«Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության բռնագանձել 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ պետական բյուջեից «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը վերադարձնել 50,000.00 ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am